ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N__02320599

Ոռոգման ջուր մատակարարելու

/իրավաբանական անձ/

ք. Երևան

«30 մարտի 2026թ.

«Երևան» Ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Ս. Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և Ընկերության սպասարկման Դավիթաշեն ենթատարածքի ջրօգտագործող ՀՀ ՆԳ Նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ջրօգտագործող) ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Խ.Իգիթյանի մյուս կողմից, երկուսը միասին «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և Ջրային օրենսգրքերով, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրի պայմաններով ոռոգման սեզոնում Ընկերությունը Ջրօգտագործողին մատակարարում է ոռոգման ջուր, իսկ Ջրօգտագործողը այն ընդունում և վճարում է:

1.2 Պահանջվող և մատակարարվող ոռոգման ջրի քանակը սահմանվում է Հավելված 1-ով, որը կազմվում է ըստ Ջրօգտագործողի ոռոգման ջրի պահանջարկի հայտի հիման վրա և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կնքվում է մինչև ոռոգման ժամանակաշրջանի սկիզբը: Այն կարող է փոփոխվել Կողմերի փոխհամաձայնությամբ:

1.3 **Ջրօգտագործողը ընդունում է պայմանագիր ստորագրելու օրվա դրությամբ Ընկերությանը նախորդ տարիներին մատակարարված ոռոգման ջրի դիմաց իր պարտքը՝ եթե առկա է, որը պարտավորվում է վճարել համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ի:**

2. Ոռոգման ջրի դիմաց կատարվող վճարները և մատակարարման պայմանները

2.1 Ոռոգման ջրի մատակարարումը՝ հանձնումը կատարվում է Ջրօգտագործողի հողամասի սահմանազատման կետում, որը իրականացվում է Ջրօգտագործողին ջուր մատակարարող ջրատարից:

2.2 Կողմերի փոխհամաձայնությամբ տվյալ հերթական ոռոգման ժամկետը կարող է տեղափոխվել մեկ այլ ժամկետ, որի դեպքում նախորդ չօգտագործված ջրի քանակը չի համալրվում և չի մատակարարվում:

2.3 Ոռոգման ջուրը Ջրօգտագործողին մատակարարված է համարվում, Ջրօգտագործողի կողմից ոռոգման ջրի բաշխման մատյանում նրա ստորագրությամբ հաստատելով, որը հիմք է հանդիսանում ստացած ոռոգման ջրի դիմաց վճարման և փոխադարձ հաշվարկների համար:

2.4 Մատակարարվող ոռոգման ջուրը չափվում է հողամասի սահմանազատման կետում և հաշվառվում է խորանարդ մետրով, որի մեկ միավորի դիմաց գումարը՝ 11/տասնմեկ/դրամը սահմանում է Ընկերության ընդհանուր (ներկայացուցիչների) ժողովը :**Ջրաչափումը իրականացվում է շարժական ջրաչափով կամ հոսքաչափով,համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի և Գյուղ. նախարարի 02.04.2007թ համատեղ թիվ 18-Ա և 77-Ա հրամանների:**

2.5 Ջրօգտագործողը վճարում է փաստացի ստացած ոռոգման ջրի համար:

2.6. Տվյալ ամսվա ընթացքում ստացած ոռոգման ջրի դիմաց Ջրօգտագործողը վճարում է մինչև հաջորդող ամսվա 20-ը՝ անկանխիկ եղանակով, բանկային կամ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով:

3. Կողմերի պատասխանատվությունները, իրավունքներն ու պարտականությունները

3.1 Ընկերությունն իրավունք ունի՝

3.1.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում մատակարարված ջրի դիմաց վճարում չկատարելու դեպքում՝ Ջրօգտագործողի նկատմամբ **կիրառել Պայմանագրով և օրենքով նախատեսված միջոցներ, համաձայն ՀՀ կառավարության 26.12.2002թ. թիվ 2121 –Ն որոշման, զգուշացնելուց հետո դադարեցնել ջրամատակարարումը :**

3.1.2 Ջրօգտագործողի կողմից ջրելու ձևավորված հերթի խախտումով կամ ինքնագլուխ (ջրագողության) ճանապարհով ոռոգման ջրի օգտագործման դեպքում՝ Ջրօգտագործողի մասնակցությամբ, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ առանց նրա մասնակցության, կազմել համապատասխան ակտ՝ նրան վարչական պատասխանատվության ենթարկելու համար կամ հանձնել Ընկերության Վեճեր լուծող Հանձնաժողովի քննարկման:

3.1.3 Հերթական ոռոգման ջուրը Ընկերությունը իրավունք ունի չմատակարարելու, եթե Ջրօգտագործողի կողմից ամբողջովին չի վճարվել նախորդ ամսվա մատակարարված ոռոգման ջրի դիմաց: Նախորդ ամսվա պարտքը մարելուց հետո 4/չորս/ օրվա ժամկետում ոռոգման ջրամատակարարումը վերսկսվում է:

3.1.4 Հայտով չնախատեսված կամ պակաս հայտավորված ոռոգման ջուրը չի մատակարարվում, այն կարգավորվում է սույն պայմանագրի կետ 3.2.4-ում սահմանված կարգով:

3.1.5 Պահանջել Ջրօգտագործողից հատուցելու Ընկերությանը պատճառած վնասները, չստացված եկամուտները և այն ծախսերը, որոնք Ընկերությունը կատարել է իր խախտված իրավունքները և գույքային կորուստները վերականգնելուն կամ վնասված ոռոգման համակարգը վերանորոգելու կամ մատակարարումը վերականգնելու համար:

3.1.6 Դատական կարգով Ջրօգտագործողից բռնագանձել չվճարված ջրի պարտքի գումարը և սույն պայմանագրի կետ 2.6-ում սահմանված վճարման ժամկետի խախտման համար տույժ՝ պարտքի գումարի օրական 0.15% , հաշվարկելով ոչ ավելի, քան 180 օր:

ոռոգման ջրի գումարից:

3.2. Ջրօգտագործողն իրավունք ունի՝

3.2.1 Ստանալ Հավելված 1-ով նախատեսված ծավալի ոռոգման ջուր:

3.2.2 Նախօրոք գրավոր պահանջել (ջրումից առնվազն 2 օր առաջ) ջրաչափություն իր հողակտորի սահմանազատման կետում:

3.2.3 Ջրաչափիչ-հաշվառող սարքերի բացակայության կամ տեղադրման տեխնիկապես անհնարինության դեպքերում, կողմերի համաձայնությամբ, մատակարարված ջրի ծավալը չափվում և հաշվարկվում է ջրաչափական այլ մեթոդներով՝ ըստ

ջրանցքի լայնական կտրվածքի մակերեսի և /կամ/ խողովակի տրամագծի, ջրի արագության ու հորիզոնի, ինչպես նաև ղեկավարվելով գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմեր սահմանող ձեռնարկներով:

3.2.4. Ոռոգման սեզոնում գրավոր դիմել Ընկերությանը՝ Հայտի փոփոխության վերաբերյալ:

3.2.5 ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել պատճառված վնասի փոխհատուցում:

3.2.6 Ոռոգման շրջանում ծագած տարաձայնությունների և վիճելի հարցերով դիմել Ընկերության Վեճեր լուծող Հանձնաժողովին:

4. Ընկերությունը պարտավորվում է՝

4.1 Ջրօգտագործողին ոռոգման ջուրը մատակարարել Հավելված 1-ով նախատեսված քանակով, իսկ պակաս մատակարարված ջրի ծավալը համալրել տասնօրյա ժամկետում:

4.2 Հատուցել իր մեղքով ջրօգտագործողին պատճառած նյութական վնասը:

4.3 Ջրօգտագործողի դիմումը 10/տասը/ օրվա ընթացքում քննարկել Ընկերության Վեճեր լուծող Հանձնաժողովում և նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել Ջրօգտագործող- դիմումատուին:

5.4. Ջրօգտագործողը պարտավորվում է՝

5.1 Իր միջոցներով սպասարկել անմիջականորեն իր հողակտորի սահմանազատման կետին մոտեցնող ջրատարի հատվածը (իրեն նախորդող մշակվող հողատարածքից մինչև տվյալ հողատարածքը):

5.2 Համաձայնեցված ժամկետում իր հողակտորի սահմանազատման կետում ստանալ ոռոգման ջուր:

5.3 Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարը կատարել մինչև հաջորդող ամսվա 20-ը: Միաժամանակ, տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Ընկերությունը չվճարված պարտքի գումարը բռնագանձի արագացված դատաքննությամբ, վճարման կարգադրության վարույթով՝ նոտարական ակտով, հեռակա դատաքննությամբ:

5.4 Հողատարածքը չմշակելու և /կամ/ չոռոգելու դեպքում մինչև մայիսի 15-ը դիմում ներկայացնել Ընկերություն՝ պայմանագրի գործողությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու համար:

5.5 Մինչև ոռոգվող հողատարածքի օտարումը կամ իրավահաջորդության պետական գրանցումը, մարել Ընկերության պարտքը, ձեռքբերողին կամ իրավահաջորդին փոխանցել սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այդ մասին 10/տասը/օրվա ընթացքում տեղեկացնել Ընկերությանը:

6. Վեճերի լուծման կարգը և այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են փոխհամաձայնությամբ, անարդյունավետության դեպքում՝ Ընկերության Վեճեր լուծող Հանձնաժողովի միջոցով: Իսկ անհամաձայնության դեպքերում լուծվում են դատական կարգով:

6.2 Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է 1 տարի ժամկետով: Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված նույն ժամկետով և պայմաններով, եթե Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից երեք ամիս առաջ կողմերից մեկը մյուսին չի դիմել այն լուծարելու համար:

6.3 Պայմանագիրը վաղաժամկետ կարող է փոփոխվել, լրացվել կամ լուծվել Կողմերի համաձայնությամբ կամ Կողմի նախաձեռնությամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրքով նախատեսված հիմքերով և կարգով:

6.4 <u>Եթե Ջրօգտագործողը պայմանագրի 5.4.3.կետում նշված ժամկետում չի վճարում տվյալ ամսվա ոռոգման ջրի դիմաց , Ընկերությունը, փոստային առաքմամբ Ջրօգտագործողի նշած հասցեով, ուղարկում է Ծանուցում – Հիշեցում, որը եթե վերադարձվում է Ընկերություն կամ երկշաբաթյա ժամկետում Ընկերությունը չի ստացել հետադարձ ծանուցումը, ապա Ընկերության կողմից այդ Ծանուցման մասին տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում http: /www,azdarar,am/, ըստ որի 5/հինգ/-րդ օրից սկսած Ջրօգտագործողը համարվում է պատշաճ ծանուցված :</u>

Ընկերություն	Ջրօգտագործող
«Երևան» ՋՕԸ	ՀՀ ներքին գործերի նախարարություն (ՓԾ)
	(անուն, ազգանուն)
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Արշակունյանց 69	Իրավաբանական հասցե՝ ք. Երևան,Նալբանդյան 130
Գործունեության հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 75/44	Գործունեության հասցե՝ ք. Երևան,
ՀՎՀՀ 02235077	Դավիթաշեն 4, Ա.Միկոյան 109/8 փ
«Արդշինբանկ» Մալաթիա մ/ճ	ՀՎՀՀ 02882913
Հ/Հ 2474233158420010	Բանկ՝ ֆինան.նախ-յան գործարնական վարչության
Հեռ.՝ (010) 26 -00 -88	Հ/Հ 900011046373
	Էլ. փոստի հասցե՝
Գործադիր տնօրեն՝ Ս. Հարությունյան	Հեռ.
	Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
ԿՏ	Խ.Իգիթյան

«Երևան» ՋՕԸ _Դավիթաշեն ենթատարածք
Բաժանարար _ Երքաղխորհրդի ջրատար

Հավելված N 1

«30 »մարտի 2026թ N02320599 պայմանագիր

ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ
Ոռոգվող մշակաբույսերի տեսակը, հողի մակերեսը և պահանջվող ոռոգման ջրի քանակը

Ոռոգման համակարգի անվանումը, բաժանարարի համարը (անվանումը)	Ոռոգվող հողատարածք	Ջուր	Հացահատիկ		Բանջարաբոստան		Պտղատու այգի		Այլ Կուլտուրաներ		Խաղողի այգի		Բազմամյա խոտ		Ծխախոտ		Կարտոֆիլ		Տնամերձ	
	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ³
Երքաղխորհրդի ջրատ.	0,7	h/g							0,7	h/g										
Ընդամենը՝	0,7	h/g							0,7	h/g										

Յուրաքանչյուր ամսվա 10-սնօրյակի համար կազմվում է երկկողմանի ստորագրված ակտ-օրագրեր,որում նշվում է ոռոգման ջրի մատակարարման օրը,քանակը և վճարման գումարը,որի հիման վրա Ջրօգտագործողը կատարում է վճարում:Ըստ հայտի մատակարարված ոռոգման ջրի քանակի հանրագումարի դիմաց հաշվարկված գումարը հանդիսանում է պայմանագրի գինը:Տարին վճարվում է անդամավճար 1հա հաշվարկով՝ 2000դրամ,իսկ 1հա-ից ավելին հաշվարկվում է 1 հա՝ 2000 դրամ:

Ջրամատակարար՝ «Երևան» ՋՕԸ

Գործադիր տնօրեն՝ _____ Ս. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Ջրօգտագործող՝
ՀՀ ներքին գործերի նախարարություն (ՓԾ)____

Հասցե՝ Դավիթաշեն 4,Ա.Միկոյան 109/8 փ

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները
կատարող՝ Խ.Իգիթյան

«30 »մարտի 2026թ.